ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

-- 2014 թվականի

Հայաստանի Հանրապետության տեսչական համակարգի օպտիմալացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության տեսչական համակարգի օպտիմալացման հայեցակարգին՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության տեսչական համակարգի օպտիմալացման գործողությունների համառոտ ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության տեսչական համակարգի օպտիմալացումը համակարգվելու է տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի կողմից և իրականացվելու է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի քարտուղարության կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ

I. Նախաբան

1. Տեսչական գործընթացը գործադիր իշխանության կողմից կիրառվող գործիք է՝ ուղղված օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողության ապահովմանը: Պետական հսկողությունը, որը պետությունից, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտներից բավական մեծ ռեսուրսներ ու ջանքեր է կլանում, ուղղված է հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանը, անվտանգության ապահովմանը: Այն կոչված է աջակցել տնտեսվարող սուբյեկտներին՝ գործելու օրենսդրության շրջանակներում և հանրությանը զերծ պահելու վտանգավոր սննդամթերքից, վարակիչ հիվանդություններից, վնասակար արտադրանքից և նմանատիպ այլ վտանգներից: Տեսչական ստուգումների ոչ ճիշտ կազմակերպումը և ոչ պատշաճ իրականացումը կարող են լուրջ հետևանքներ ունենալ պետության օրինական շահերի պաշտպանության, տնտեսվարող սուբյեկտների բնականոն գործունեության և քաղաքացիների կյանքի, առողջության և բարեկեցության համար:

2. Հայաստանում ընթացող տեսչական բարեփոխումների շրջանակում նախատեսվում է իրականացնել գործող տեսչական համակարգի և իրականացվող ստուգումների օպտիմալացման ծրագիր, որի նպատակն է առավել արդյունավետ տեսչական համակարգի ձևավորումը բոլոր շահառուների տեսանկյունից.

1) **Սպառողների համար**՝ անվտանգության ապահովում,
2) **Տնտեսավարող սուբյեկտների համար**՝ կանխատեսելի գործարար միջավայրի ապահովում, զերծ ավելորդ բյուրոկրատիայից և անհարկի ճնշումներից՝ տեսուչ-տնտեսավարող սուբյեկտ հարաբերությունների նոր հարթակում,
3) **Պետության համար**՝ ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում, անվտանգության ապահովման առավելագույն մակարդակի պայմաններում:

3. Մի շարք զարգացած և զարգացող երկրներում նմանատիպ խնդիրների լուծման համար կիրառվող գործիքները հիմնականում ներառում են օրենսդրական դաշտի վերանայումը և համապատասխան օրենսդրական փոփոխությունները, կառուցվածքային և կառավարման համակարգի բարեփոխումները, տեղեկատվական համակարգի բարելավումը՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, կադրային փոփոխություններն ու մասնագետների որակավորման բարձրացումը:

4. Սույն փաստաթուղթը ներկայացնում է տեսչական համակարգի օպտիմալացման հիմնական սկզբունքներն ու ուղղությունները, որոնք մշակվել են հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը: Միջազգային լավագույն փորձի կիրառման համար հաշվի են առնվում Հայաստանում դրանց տեղայնացման առանձնահատկությունները:

II. Տեսչական բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում

5. Հայաստանի Հանրապետության կառավարությունն արմատական բարեփոխումներ է նախաձեռնել տեսչական համակարգում՝ 2009թ. սեպտեմբերի 17-ի թիվ 1135-Ն որոշմամբ հավանություն տալով Տեսչական բարեփոխումների հայեցակարգը, նպատակ ունենալով բարելավել գործող տեսչական համակարգը, որը ենթադրում է վերացնել հաճախակի և ոչ տեղին ստուգումները, ոչ թափանցիկ տեսչական գործընթացները, վարչական կոռուպցիան և տեսչական գործընթացում գործառույթների կրկնորդումները՝ անցում կատարելով ռիսկի գնահատման վրա հիմնված ստուգումների համակարգի: Տեսչական բարեփոխումների իրականացման համար ՀՀ կառավարության 2009թ. Սեպտեմբերի 17-ի N 1135-Ն որոշմամբ ստեղծվել է տեսչական բարեփոխումների համակարգման խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ) և քարտուղարություն (ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեսչական բարեփոխումների խումբ): Բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը բարեփոխումների գործընթացում ապահովելու նպատակով ընտրվել է պետություն-մասնավոր հատված երկխոսության սկզբունքը՝ տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդում ընդգրկվելով ինչպես ՀՀ կառավարության անդամներ, այնպես էլ ներկայացուցիչներ ՀՀ նախագահի աշխատակազմից, ՀՀ կենտրոնական բանկից, Ազգային ժողովից, գործարար միջավայրի և սպառողների շահերի պաշտպանության մի շարք հասարակական կազմակերպություններից:

6. Անցումային փուլում 2011 թվականին փոփոխություններ են կատարվել «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում: Օրենքի փոփոխությունների ընդունմամբ՝ ռիսկի գնահատման վրա հիմնված ստուգումների վերաբերյալ մեթոդաբանության կիառումը և ստուգաթերթերի առկայությունը ստուգում իրականացնող մարմինների համար դարձել է պարտադիր պահանջ: Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի միջոցով ստուգում իրականացնող մարմինը ստուգումները նպատակադրում է դեպի այն ոլորտները և վերահսկման օբյեկտները, որոնք առավել ռիսկային են:

7. Ստուգում իրականացնող մարմինը վարում է տվյալների բազա, որը ներառում է տեղեկատվություն իր վերահսկման ոլորտում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշներով վերջիններիս տրված գնահատականի վերաբերյալ:

8. Սահմանվել է, որ ստուգում իրականացնող մարմինները, ըստ իրենց կողմից մշակված և ՀՀ կառավարության կողմից հաստատված մեթոդաբանության, տնտեսվարող սուբյեկտներին դասակարգում են ռիսկայնության երեք խմբերից մեկում՝ բարձր, միջին կամ ցածր: Բարձր ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտները կարող են ստուգվել տարին մեկ անգամ, միջին ռիսկայնության խմբում ընդգրկվածները՝ 3 տարին մեկ անգամ և ցածր ռիսկայնության խմբում ընդգրկվածները՝ 5 տարին մեկ անգամ:

9. Սահմանվել է նաև, որ ստուգում իրականացնող պետական մարմինները պարտավոր են մինչև ստուգումներին նախորդող տարվա դեկտեմբերի 1-ը հաստատել և

էլեկտրոնային կայքում հրապարակել ստուգումների տարեկան ծրագիրը, բացառությամբ հարկային մարմնի, որը ստուգումների տարեկան ծրագիրը հաստատում է մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը՝ ծրագրի հաստատման տարվա հուլիսի 1-ից մինչև ծրագրի հաստատմանը հաջորդող տարվա հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի համար, ինչպես նաև նախորդ տարում իրականացված ստուգումների վերաբերյալ մանրամասն հաշվետվություն՝ մինչև հաջորդող տարվա հունվարի 20-ը:

10. Միաժամանակ, տեսչական բարեփոխումների անցումային շրջանը տնտեսավարող սուբյեկտների համար հնարավորինս թեթևացնելու նպատակով ՀՀ կառավարության կողմից 2009թ. մայիսի 29-ին ընդունված որոշմամբ սահմանվել է ստուգումների անցկացման արգելք՝ մորատորիում, համաձայն որի՝ բացառությամբ ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների, ստուգում իրականացնող մարմինները իրավունք չունեն ստուգումներ իրականացնել մինչև 70 միլիոն ՀՀ դրամ շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտների մոտ այնքան ժամանակ, քանի դեռ չի ներդրել ռիսկի գնահատման վրա հիմնված ստուգումների համակարգը:

11. Բացառությամբ Լեզվի պետական տեսչությունից՝ բոլոր ստուգում իրականացնող մարմիններում ռիսկի գնահատման վրա հիմնված ստուգումների համակարգի մեթոդաբանությունները, ինչպես նաև ոլորտային ստուգաթերթերի գերակշիռ մասը հաստատվել են ՀՀ կառավարության կողմից: Ռիսկի գնահատման վրա հիմնված ստուգումների համակարգի լիարժեք կիրառման հիմնական խնդիրը ժամանակակից տեղեկատվական համակարգի բացակայությունն է, որի միջոցով պետք է կատարվի ռիսկի գնահատումը և ռիսկի կառավարումը տեսչությունների կողմից:

III. Գործող տեսչական համակարգը

12. Ներկայումս Հայաստանում ստուգումներն իրականացվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի համաձայն: Ստուգում իրականացնող մարմինների նպատակն է ստուգել տնտեսավարող սուբյեկտի կողմից ծավալած փաստացի գործունեության համապատաս-խանությունը գործող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին, այդպիսով հանրությանը զերծ պահելով դրանց անհամապատասխանության արդյունքում հարավոր վտանգներից, վտանգավոր սննդամթերքից, վարակիչ հիվանդություններից, վտանգավոր աշխատանքից, որը ներկայումս իրականացվում է 17 տարբեր պետական մարմինների կողմից:

13. Հայաստանում գործում է տեսչությունների երեք մակարդակ.

1) Տարբեր նախարարությունների աշխատակազմերում գործող տեսչություններ,
2) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
3) Նախարարության պետական կառավարման ոլորտում գործող առանձին պետական մարմին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն:

14. Տարբեր նախարարությունների աշխատակազմերում գործող տեսչություններում կառավարումն իրականացվում է նախարարի, իսկ ղեկավարումը՝ տեսչության պետի կողմից: ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կառավարումը մեծամասամբ իրականացվում է ծառայության պետի կողմից:



Գծապատկեր 1. Գործող տեսչական մարմինների կառավարման համակարգը

15. Ելնելով կառավարման համակարգի տարբերություններից՝ տարբեր են նաև վերոնշյալ մարմինների հաշվետվողականության սկզբունքները: Նախարարությունների աշխատակազմերում գտնվող տեսչությունների պետերը հաշվետու են համապատասխան նախարարներին, իսկ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետը հաշվետու է ՀՀ Նախագահին, ՀՀ կառավարությանը և ՀՀ վարչապետին:

16. Տարբեր են նաև ստուգում իրականացնող մարմինների կառուցվածքները՝ դրանցից մի մասը (օր. Կրթության պետական տեսչություն, Աուդիտորական գործունեության հսկողության տեսչությունը) բաղկացած են բացառապես կենտրոնական ապարատից, իսկ մի մասն (օր. Շուկայի վերահսկողության պետական տեսչություն, Բնապահպանական պետական տեսչություն, Առողջապահական պետական տեսչություն) ունի նաև տարածքային ստորաբաժանումներ:

17. Կան ստուգում իրականացնող մարմիններ, որոնք բաղկացած են միայն տեսուչներից և չունեն վարչական աշխատակիցներ կամ ունեն ոչ բավարար քանակությամբ վարչական աշխատակիցներ, ինչը խոչընդոտում է վերջիններիս արդյունավետ աշխատանքին:

18. Տեսուչները, բացառությամբ ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների տեսուչների, քաղաքացիական ծառայողներ են և բոլոր տեսչություններում գործում են քաղաքացիական ծառայության կանոնակարգերը:

19. Տեսչությունները, բացի ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների, հիմնականում չունեն տվյալների էլեկտրոնային բազա և տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տվյալները և ստուգումների արդյունքները պահում

են թղթային տարբերակով: Որոշ դեպքերում թղթային տարբերակներն ամբողջական չեն և ունեն համակարգման կարիք: Որոշ տեսչություններ մշակել կամ մշակում են ստուգումներին առչվող տվյալների բազաներ, որոնց մի մասը ներառում է տեղեկատվություն տնտեսվարող սուբյեկտների և ռիսկային չափանիշների վերաբերյալ: Առանձին տեսչություններում պահվող և օգտագործվող տվյալների բազաներից և ոչ մեկը ինտեգրված չէ այլ տեսչությունների հետ համատեղ կամ առանձին օգտագործման համար նախատեսված տվյալների բազաներին:

20. Տեսչությունների միջև անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումն իրակա-նացվում է գրավոր դիմում-պատասխանի միջոցով: Տեղեկատվությունը փոխանակվում է ոչ թե տեսչությունների, այլ նախարարությունների միջև, իսկ որոշ դեպքերում նաև ՀՀ կառավարության միջոցով:

21. ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը և ՀՀ ֆինանսների նախարարության հարկային մարմինը տրամադրում են վեբ ծառայության արտապատկերներ՝ ինտեգրումը հեշտացնելու նպատակով, սակայն որևէ տեսչություն չի օգտվում այդ հնարավորությունից՝ հիմնականում առանձին տեսչությունում տեսչական ստուգումների համար նախատեսված տեղեկատվական համակարգերի բացակայության պատճառով:

IV. Ստուգումների իրավասություն ունեցող այլ մարմիններ

22. Համաձայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի՝ ստուգումների իրավասությամբ օժտված են նաև.

1) ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն,
2) ՀՀ ազգային վիճակագրության ծառայությունը,
3) ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը,
4) Լիցենզավորող պետական մարմիններ,
5) ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը:

23. Ստուգում իրականացնելու իրավասություններ ունեցող այս մարմիններն առանձնացված տեսչություններ կամ ստուգող վարչություններ չունեն և իրենց կարգավորման ոլորտում իրականացնում են նեղ մասնագիտական ստուգումներ, որը կարգավորվում է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով և չեն ներառվում սույն ծրագրում:

24. ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների ինստիտուցիոնալ և կազմակերպչական գործառույթները կարգավորվում են հարկային և մաքսային իրավական ակտերով և այդ ոլորտներում ստուգումների արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվող վերակազմակերպումների միջոցով բարե-փոխումներ չեն նախատեսվում:

V. Տեսչական բարոփոխումների միջազգային փորձը

25. Տարբեր երկրների տեսչական համակարգերում տեղի ունեցած բարեփոխումների արդյունքում տեսչական մարմինները միավորվել են տվյալ երկրի առանձնահատկություններից ելնելով:

Նիդերլանդներում 26 պետական տեսչությունների միավորման արդյունքում ձևավորվել է 12 տեսչություն: Նախատեսվում է, որ մինչև 2015 թվականը բոլոր տեսչական մարմինների վերջնական թիվը չի գերազանցելու 10-ը: Տեսչությունները միավորվել են ըստ թեմատիկ ոլորտների: Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում տեսչական համակարգում աշխատակիցների քանակը 7500-ից դարձել է 5800:

Միացյալ Թագավորությունում տեսչական համակարգի վերլուծության նպատակով ստեղծված հանձնաժողովը խորհուրդ է տվել (2005 Hampton Review) կառավարությանը խմբավորել տեսչական գործառույթներ ունեցող մարմիններին հետևյալ 9 խմբում.

1) Սպառողների շահերի պաշտպանություն և առևտրային ստանդարտներ,
2) Առողջություն և անվտանգություն,
3) Սննդամթերքի ստանդարտներ,
4) Շրջակա միջավայրի պաշտպանություն,
5) Գյուղական հարցեր,
6) Գյուղատնտեսության,
7) Անասնաբուժություն,
8) Պետական Եկամուտների,
9) Հրդեհային անվտանգություն:

Սլովենիայում ներկայումս իրականացվող տեսչական բարեփոխումների շրջանակներում 28 տեսչական մարմիններից 2013 թվականի հուլիսի դրությամբ ձևավորվել է 23 տեսչություն, որոնցից միայն 8-ն ունեն տարածքային ստորաբաժանումներ, որոնցում աշխատում է Սլովենիայի տեսուչների 90%-ից ավելին:

Որոշ զարգացող երկրներ ներկայումս փորձում են ստեղծել միասնական տեսչական մարմին՝ խմբավորելով մեկ կառույցի ենթակայության ներքո գործող ստուգում իրականացնող բոլոր պետական մարմիններին: Նման տեսչական համակարգերը չեն ներառում հարկային և մաքսային մարմիններին, թեև միջազգային փորձագետների կարծիքով նման մոտեցումը չունի տրամաբանական բացատրություն: Առաջին երկիրը Խորվաթիան էր, որը որդեգրել է նման մոտեցում դեռ 1997 թվականին և մեկ կառույցում խմբավորեց 12 տեսչական մարմին: Մեկ տեսչական մարմնի համապարփակ գաղափարը այնուհետև իրականացվել է Բոսնիա և Հերցեգովինայում, Մոնղոլիայում և որոշ այլ երկրներում:

26. Բոլոր ուսումնասիրությունները բերում են այն եզրահանգմանը, որ միջազգային փորձում տնտեսավարող սուբյեկտների վերահսկողության տեսանկյունից հստակորեն իրարից տարանջատվում են հետևյալ 6 ռիսկային ոլորտները.

1) Սննդամթերքի անվտանգություն վերահսկողություն,

2) Ոչ պարենային արտադրանքի անվտանգություն և սպառողների շահերի պաշտպանություն/չափագիտական վերահսկողություն,
3) Բնապահպանական վերահսկողություն,
4) Առողջապահական վերահսկողություն,
5) Աշխատանքային՝ տեխնիկական և շինարարական անվտանգության վերահսկողություն,
6) Հակահրդեհային և տեխնիկական անվտանգության վերահսկողություն

VI. Տեսչական համակարգի օպտիմալացման անհրաժեշտությունը

27. Չնայած վերջին տարիների ՀՀ կառավարության և միջազգային կազմակերպությունների ջանքերին, ՀՀ տեսչական համակարգը դեռևս չի համապատասխանում միջազգային չափանիշներին և չի համարվում արդյունավետ համակարգ:

28. Տեսչական բարեփոխումների նախնական փուլում բացահայտվել են տեսչական համակարգի առկա խնդիրները, այդ թվում.

1) Տեսչական և քաղաքականություն մշակող մարմինների շահերի բախումները, դրանից բխող բացասական ազդեցությամբ,
2) Տեսչություններում առկա ոչ արդյունավետ կառավարման համակարգերը,
3) Ռեսուրսների ոչ օպտիմալ օգտագործումը,
4) Տեսչական մարմինների գործառույթների համընկնում և կրկնորդումների առկայություն,
5) Արդյունավետ բողոքարկման մեխանիզմների բացակայությունը,
6) Գործընթացների կարգավորման բացերը և կարգավորման թերի մեխանիզմները,
7) Հաճախակի, չհամակարգված և ոչ տեղին ստուգումները, տեսուչների միջև տեղեկատվության փոխանակման ցածր մակարդակը,
8) Տեսչությունների գործառույթների, վերահսկման գործիքների ու մեթոդների ոչ արդիականությունը,
9) Տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ տեսուչների կանխակալ մոտեցումը,
10) Տեսուչների մասնագիտական ցածր պատրաստվածությունը,
11) Տեսուչների ցածր աշխատավարձերը և վարչական կոռուպցիան,
12) Տնտեսվարող սուբյեկտների իրազեկվածության ցածր մակարդակը,
13) Տեղեկատվության հավաքագրման, մշակման միասնական բազայի, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման միասնական համակարգի բացակայությունը:

29. Առկա խնդիրները լուրջ խոչընդոտ են հանդիսանում պատշաճ հսկողության իրականացման, հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի իրավունքների ու

օրինական շահերի պաշտպանության և պետական ռեսուսների արդյունավետ օգտագործ-ման համար:

30. Շատ հաճախ տուգանքներ կարող են գանձվել ոչ էական «խախտումների» համար: Տեսուչներին տրված է խախտումները գնահատելու և տուգանք նշանակելու շատ լայն հնարավորություն: Չնայած տուգանքների չափերը բարձր չեն (հիմնականում չափազանց ցածր են իրենց նպատակին ծառայելու համար), տնտեսավարող սուբյեկտների համար առավել խնդրահարույց է տեսուչների կողմից անհանգստություն պատճառելու գործոնը, ինչպես նաև այն ժամանակը, որ տնտեսավարող սուբյեկտների ղեկավարները ստիպված են տրամադրել: Տնտեսավարող սուբյեկտները հիմնականում չեն պատկերացնում կամ շատ մոտավոր պատկերացում ունեն ինչպես տեսչական ստուգումների, այնպես էլ իրենց իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ: Հաճախ պարզ չեն լինում տեսչության մանդատը, իրավասությունների շրջանակը և ստուգումների նպատակները:

31. Արդյունավետ և արդիական տեսչական համակարգ ձևավորելու համար առաջարկվում է տեսչական համակարգի բարեփոխումների շրջանակում իրականացնել տեսչական համակարգի և ստուգումների օպտիմալացման ծրագիր. օպտիմալ թվով մարմինների և տեսուչների միջոցով իրականացնելով առավել բարձր արդյունավետությամբ ստուգումներ, որոնք կբերեն հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը և պետական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

32. ՀՀ կառավարությունը պետք է կենտրոնացնի իր վերահսկողական ռեսուրսը բացառապես այն ոլորտներում, որտեղ հանրության համար կարող են առաջանալ վտանգներ, այսինքն տեսչական ռեսուրսն ուղղվի բացառապես անվտանգության ապահովմանը: Հաշվի առնելով սահմանափակ ռեսուրսները՝ արդյունավետ տեսչական համակարգ կարելի է ստեղծել համադրելով վերահսկման ենթակա ոլորտների օպտիմալ քանակն ու ռիսկի գնահատման վրա հիմնված ստուգումների համակարգը:

33. Անհրաժեշտ է վերանայել տեսչական մարմինների գործառույթները և կարգա-վիճակը՝ որոշ դեպքերում տարանջատելով դրանք այն նախարարություններից, որոնք ոլորտի զարգացման քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ երբեմն հանդիպում են վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինների հակազդեցությանը, ինչի արդյունքում առաջանում է շահերի բախում և տուժում է ոլորտի անվտանգությունը, քանի որ առաջնայնությունը երբեմն տրվում է քաղաքականություն մշակող մարմնի նպատակներին:

34. Այս դեպքում տեսչական մարմինների միավորումն ըստ ոլորտների և անվտանգության գործառույթների տարանջատումը նախարարությունների քաղաքականությունից ներկայիս ձևավորված միջազգային լավագույն մոտեցումներից մեկն է:

35. Օպտիմալացման ծրագրի անբաժանելի մաս է կազմում տեսչությունների տեղեկատվական կառավարման համակարգի մշակումն ու ներդրումը, որի բացակայությունը խիստ բացասաբար է ազդում աշխատանքների համակարգման և արդյունավետության վրա:

36. Տնտեսվարող սուբյեկտների կազմակերպաիրավական տեսակի մասին

գրանցված տեղեկություններն այն հիմքի մասն են, որի վրա կառուցվում են տեսչական համակարգի տեղեկատվական կառավարման համակարգերը: Ծանուցումն առ այն, որ նորաստեղծ ընկերությունը սկսել է իր գործունեությունը, ինչպես նաև դրա անվանումը, գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գտնվելու վայրը, ակտիվների մասին տեղեկությունները, կազմում են տեսչական ստուգումների ծրագրի արդյունավետ վարչարարության համար անհրաժեշտ տեղեկատվության կարևոր մաս:

37. Ներկայումս տեսչությունների համար հասանելի է նրանց կողմից պահանջվող կարևոր տեղեկատվության ոչ բավարար մասը, սակայն տեսչական ստուգումների ծրագրի արդյունավետ վարչարարության վրա դեռևս բացասաբար են ազդում հետևյալ հանգամանքները.

1) Տեսչական գործառույթները իրականացնելու համար պահանջվող տեղեկությունները հիմնականում հասանելի են ոչ էլեկտրոնային եղանակով, այլ թղթային փաստաշրջանառության (հարցումների հիման վրա տեղեկություն ներկայացնելու) միջոցով.

2) Ավտոմատացված համակարգի բացակայությունը խոչընդոտում է տեսչությունների կողմից տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնության գնահատման գործընթացին:

3) Պահանջվող տեղեկատվությունը հավաքելու համար տեսչությունները ստիպված են կապ հաստատել մեկից ավելի մարմինների հետ: Հավաքելուց հետո այդ տեղեկությունները պահվում են առանձին տեսչություններում և տեսչությունները չեն ստանում տնտեսվարող սուբյեկտների ի սկզբանե գրանցված գործարար տեղեկություններում կատարված փոփոխությունների մասին թարմացված տեղեկատվություն, երբ դրանք փոփոխվում են Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում կամ ՀՀ ֆինանսների նախարարության հարկային մարմնում.

4) Առկա չէ տնտեսվարող սուբյեկտների գործարար տեղեկությունների պաշտոնական/հավաստի, համատեղ օգտագործման համար նախատեսված տվյալների բազա (օրինակ՝ տնտեսվարող սուբյեկտի անվանում, գործունեության վայր, ակտիվներ, գործող լիցենզիաներ և այլն): Նոր ընկերությունների ստեղծման, նոր տրամադրված լիցենզիաների, գործարար կարևոր տեղեկությունների փոփոխությունների և այլնի մասին ավտոմատ ծանուցման գործընթացների բացակայությունը դժվարեցնում է ստուգումների ժամանակացույցի կազմման աշխատանքները և ավելացնում է տեսչական ստուգումների նախապատրաստական աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամանակը.

5) Երբեմն տեսչությունները չունեն նախորդ ստուգումների ամբողջական պատմությունը՝ նախքան հաջորդ ստուգումների ավարտը.

6) Տարեկան ծրագրերը, ավելի կարճաժամկետ գործառնական պլանները, ստուգումների ժամանակացույցները, կազմվում են ոչ համակարգված, չեն համաձայնեցվում տարբեր տեսչությունների միջև, հաճախ հաշվի չեն առնվում նախորդ ստուգումների ընթացքում գրանցված ստուգման տևողությունը, իսկ

ստուգման արդյունքները՝ ներառյալ օգտագործված ստուգաթերթերը չեն արձանագրվում էլեկտրոնային եղանակով: Այս ամենը բացասաբար է անդրադառնում հատկապես ոչ պլանային ստուգումների իրականացման արդյունավետության և հետագա ստուգումներ ճիշտ պլանավորման վրա: .

7) Տեսչություններում կամ գերատեսչական մակարդակով մշակված չեն ներքին հսկողության կամ որակի ապահովման ընթացակարգեր, որոնց նպատակն է բարելավել ստուգումների որակը կամ ապահովել տեսչական ընթացակարգերի պատշաճ կարգով իրականացումը:

8) Առանձին տեսչության կողմից տեսչական ստուգումների ծրագրման, ժամանակացույցի կազմման և կառավարման գործընթացների չհամակարգումն այլ տեսչությունների հետ կարող է հանգեցնել նրան, որ տարբեր տեսչություններ այցելեն նույն ընկերություն՝ նույն օրը կամ մի քանի անգամ, կարճ ժամանակահատվածում:

9) Տեսուչները, երբեմն իրականացնում են իրենց գործառույթները՝ հիմնվելով տվյալ որոտում իրենց փորձի վրա, այլ ոչ թե ղեկավարվելով պաշտոնական, մանրամասն մշակված և ամրագրված կարգերի պահանջներով, որոնք ուղղորդում են ստուգումների անցկացման ու արդյունքների գրառման ընդունված ընթացակարգերը: Նման վարչարարությունը հանգեցնում է անհամապատասխանությունների ինչպես տվյալ տեսչության ներսում, այնպես էլ տեսչությունների միջև և հաճախ ազդում է ընդհանուր արդյունքների վրա՝ նվազեցնելով դրանց արդյունավետության ցանկալի մակարդակը:

38. Օպտիմալացման ծրագիրն ուղղված է լուծում տալու վերհանված հիմնախնդիրներին՝ ձևավորելով նոր արդյունավետ տեսչական համակարգը, որը կհամապատասխանի միջազգային չափանիշներին և կպաշտպանի պետության, հասարակության և տնտեսավարող սուբյեկտների շահերը:

VII. Տեսչական համակարգի օպտիմալացման սկզբունքները

39. Օպտիմալ տեսչական համակարգի ձևավորման համար պետք է սահմանվեն հետևյալ հիմնական սկզբունքները.

1) Ռիսկայնության սկզբունք
2) Թափանցիկության սկզբունք
3) Հաշվետվողականության սկզբունք
4) Անկողմնակալության սկզբունք
5) Օրինականության սկզբունք

6) Հրապարակայնության սկզբունք

7) Ամբողջականության սկզբունք

VIII. Տեսչական համակարգի օպտիմալացման ուղությունները

40. Տեսչական համակարգի օպտիմալացման հիմնական ուղղություններն են.

1) **Օրենսդրական փոփոխություններ:** Տեսչական համակարգի օպտիմալացման շրջանակներում կմշակվեն մի շարք իրավական ակտեր, կկատարվեն համապատասխան փոփոխություններ այլ օրենքներում, այդ թվում.

ա. Կմշակվի Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենքի նախագիծ, որը կսահմանի տեսչական համակարգը և ստուգում իրականացնող նոր տեսակի մարմինները, կկարգավորի տվյալ մարմինների կազմակերպաիրավական վիճակը, դրանց կառուցվածքն ու լիազորությունները, ինչպես նաև կնախատեսի դրանց կառավարման նոր համակարգը;

բ. Կմշակվի Ստուգումների մասին նոր օրենքի նախագիծ, որի անհրաժեշտությունը բխում է նախկինից կուտակված խնդիրներին, անորոշություններին լուծում տալու և օրենսդրությունը տեսչական բարեփոխումների սկզբունքներին ու նոր տեսչական համակարգին համապատասխանեցնելու անհրաժեշտությունից:

գ. Կմշակվեն վերահսկողական առանձնահատկություններ սահմանող ոլորտային օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ օրենքների նախագծեր՝ վերջիններս նոր տեսչական համակարգին և դրա սկզբունքներին համապատասխանեցնելու նպատակով:

դ. Կմշակվեն վերոհիշյալ օրենքների կիրարկումն ապահովող իրավական ակտերի նախագծեր և կներկայացվեն ՀՀ կառավարության հաստատմանը:

2) **Տեսչությունների գործառույթների, վերահսկման գործիքների ու մեթոդների վերանայում:** Կվերանայվեն տեսչությունների գործառույթները, վերահսկման գործիքներն ու մեթոդները: Յուրաքանչյուր տեսչության համար կցուցաբերվի առանձնակի մոտեցում: Կմշակվեն նոր մեթոդաբանական ձեռնարկներ և կիրականացվեն համապատասխան դասընթացներ: Կհրավիրվեն միջազգային փորձագետներ/մենթորներ, որոնք սկզբնական շրջանում տեսուչների հետ համատեղ կիրականացնեն ստուգումներ, փոխանցելով նրանց միջազգային լավագույն փորձը: Կկազմակերպվեն ուսուցողական այցեր, որի ընթացքում տեսուչները կուսումնասիրեն միջազգային լավագույն վերահսկման գործիքներն ու մեթոդները:

3) **Քարտեզագրում:** Կիրականացվի նախարարությունների ներքո գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումների՝ տեսչությունների, գործակալությունների, ինչպես նաև նախարարությունների կազմում գործող ՊՈԱԿ-ների, պետական հիմնարկների և այլ կազմակերպաիրավական ձև ունեցող մարմինների (կազմակերպությունների) կանոնադրությունների, գործառույթների, նպատակների քարտեզագրում, դրանց առջև դրված խնդիրների ուսումնասիրություն-վերլուծություն:

Դա թույլ կտա վերհանել գործադիր մարմինների կողմից իրականացվող վերահսկողական գործառույթներում առկա կրկնորդումներն ու համընկնումները:

Գործառույթների քարտեզագրման միջոցով վեր կհանվեն այն ոլորտները և ուղղությունները, որոնց վերահսկման համար որպես ավելի արդյունավետ և գործուն մեխանիզմ կարող է դիտարկվել վերահսկողական, որոշ դեպքերում նաև լիցենզավորման, թույլտվությունների տրամադրման և այլ գործառույթների ապակենտրոնացումը՝ այդ գործառույթների տարածքային պետական կառավարման մարմիններին փոխանցման միջոցով: Դա ոչ միայն կբարձրացնի վերահսկման մեխանիզմների արդյունավետությունը, այլ նաև դրական կանդրադառնա տարածքային կառավարման մարմինների վրա՝ բարձրացնելով վերջիններիս հեղինակությունը և ավելացնելով դրանց մասնակցությունը տեղական նշանակության խնդիրների լուծմանը:

Միաժամանակ քարտեզագրումն ավելի արդյունավետ կդարձնի միևնույն գերատեսչության կազմում գործող մարմինների միմյանց նկատմամբ վերահսկողության իրականացման ժամանակ առկա ռիսկերի վերհանումը՝ բացառելով ներկայումս առկա այն բազմաթիվ դեպքերը, երբ որևէ գերատեսչության կազմում գործող մի մարմին վերահսկում է նույն գերատեսչության կազմում գործող մեկ այլ մարմնի, ինչը հղի է շահերի բախման ռիսկով և ամենևին չի նպաստում տվյալ մարմինների արդյունավետ ու անաչառ աշխատանքին:

4) **Ստուգում իրականացնող մարմինների միավորում ըստ ոլորտների:** Ստուգում իրականացնող մարմիններն այսօր գործում են մի շարք ոլորտներում, որոնք շատ հաճախ խաչվում են և առաջացնում են կրկնորդումներ: Միաժամանակ, առկա են ոլորտներ, որոնք պետք է դուրս գան վերահսկման դաշտից, քանի որ սպառում են պետական ռեսուրսները, սակայն չեն նպաստում հանրության համար անվտանգ միջավայրի ապահովմանը կամ հանրային շահերի պաշտպանությանը:

Ոլորտների միավորումը կնպաստի թե տեսչական ռեսուրսի առավել արդյունավետ օգտագործմանը և թե վերահսկողական գործառույթների արդյունավետ իրականացմանը: Ստուգում իրականացնող մարմինների գործառույթների մանրակրկիթ ուսումնասիրությունից հետո դրանք կմիավորվեն ըստ ոլորտների: Զգալիորեն կկրճատվի ոլորտների թիվը և կվերանան այն գործառույթները, որոնք կամ կրկնվում են, կամ լրացնում են միմիյանց, կամ չեն նպաստում հանրության համար անվտանգ միջավայրի ապահովմանը և հանրային շահերի պաշտպանմանը:

5) **Ստուգում իրականացնող մարմինների կարգավիճակի փոփոխություն:**

Նախարարությունների և նրանց ներքո գտնվող տեսչությունների նպատակների միջև շատ հաճախ առկա են շահերի բախում, որոնք բացասաբար են ազդում տեսչությունների նպատակների իրագործման վրա: Նախարարության նպատակը հիմնականում տվյալ ոլորտի զարգացման ապահովումն է՝ քաղաքականության մշակման և իրականացման միջոցով, իսկ տեսչությունն իր նպատակներին հասնելու համար շատ հաճախ զսպում է նույն ոլորտի զարգացումը, առաջնայնությունը տալով հանրության անվտանգության ապահովմանը: Միաժամանակ, նախարարությունը և

մշակում է ոլորտը կարգավորող նորմերը, և ապահովում է դրանց կիրառման նկատմամբ իրականացվող վերահսկողությունը, ինչը երբեմն առաջացնում է շահերի բախում և խոչընդոտում է ոլորտի զարգացմանը

Օրենքով կսահմանվի ստուգում իրականացնող նորաստեղծ մարմինների կարգավիճակը, որը որոշակիորեն կապահովի ստուգում իրականացնող մարմինների գործունեության անկախությունը ոլորտային քաղաքականությունը մշակող և իրականացնող մարմիններից, ինչպես նաև կնպաստի ստուգում իրականացնող մարմնի՝ որպես վերահսկողություն իրականացնող ինքնուրույն մարմին կայանալուն:

6) **Ստուգում իրականացնող մարմինների կառավարման նոր համակարգ**: Նորաստեղծ տեսչական մարմիններում կներդրվի կոլեգիալ կառավարման նոր համակարգ: Մարմնի գործունեության թափանցիկության ապահովման համար կձևավորվեն պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչներից բաղկացած կառավարման խորհուրդներ: Կառավարման խորհրդի լիազորությունները կսահմանափակվեն հիմնականում ռազմավարական խնդիրների ու դրանց իրագործմանն ուղղված նպատակների սահմանմամբ և որոշումների կայացմամբ՝ ստուգումների տարեկան ծրագրերի, հաշվետվությունների, ստուգումների ուղեցույցների հաստատում, ռազմավարական խնդիրների իրագործմանն ուղղված տեսչական մարմնի գործունեության նպատակների սահմանում և կատարողականի ցուցանիշների սահմանում և կառավարում:



Գծապատկեր 2. Տեսչական մարմինների կառավարման համակարգը

Կարևորելով տեսչական ծառայողի նոր կարգավիճակի ներդրումն ու բողոքարկման նոր մեխանիզմներ ստեղծելու անհրաժեշտությունը՝ կգործի բողոքարկման հանձնաժողով: Բողոքարկման հանձնաժողովը կքննարկի և կընդունի որոշումներ տեսչական ստուգումների արդյունքում կայացրած որոշման կամ տեսուչի կողմից հայտնաբերված փաստարկների կապակցությամբ տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված դիմում-բողոքների և գանգատների վերաբերյալ:

Ներքին հսկողության պատասխանատուն կնպաստի տեսչական մարմնի կողմից իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Նեքրին աուդիտի միջոցով կուսումնասիրվի թե տեսչական մարմնի, և թե առանձին տեսուչների կողմից կատարվող աշխատանքները: Ներքին աուդիտի և ներքին հսկողության պատասխանատուի աշխատանքի արդյունքները կներկայացվեն կառավարման խորհրդին, ինչը հնարավորություն կտա վերջինիս մշակել և առաջարկել համապատասխան միջոցառումներ հայտնաբերված խնդիրների և շեղումների վերացման ուղղությամբ:

7) **Տեսչություններում ռիսկի գնահատման վրա հիմնված ստուգումների համակարգի կատարելագործում:** Պարբերաբար կվերանայվեն և կկատարելագործվեն բոլոր տեսչություններում ներդրված ռիսկի գնահատման վրա հիմնված ստուգումների համակարգը՝ համադրելի և համատեղ օգտագործվող մանրամասն տվյալների բազաներով, այդ թվում ստուգում իրականացնող մարմինների կողմից մշակված և ՀՀ կառավարության կողմից հաստատված ռիսկի գնահատման վրա հիմնված ստուգումների համակարգի մեթոդաբանություններն ու ստուգաթերթերը: Կիրականացվի պարբերական մոնիթորինգ՝ պարզելու, թե իրականում ինչպես են լրացվում և կառավարվում տվյալների բազաները, գնահատվում տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնության միավորները, լրացվում ստուգաթերթերը ստուգումների ընթացքում և այլն: Մոնիթորինգի արդյունքում վեր կհանվեն առկա խնդիրները, կմշակվեն և կիարկանացվեն առաջացած խնդիրների հաղթահարման միջոցառումներ:

8) **Կանոնակարգման գործիքների վերանայման մշտական կարողությունների ստեղծում:** Նախատեսվում է մշակել և ներդնել կանոնակարգման նորմատիվ-իրավական բազայի, ռիսկերի գնահատման մեթոդաբանությունների, ստուգաթերթերի և այլ նմանատիպ գործիքների վերանայման այնպիսի պարբերական համակարգ, որը թույլ կտա իրականացնել անհրաժեշտ, հրատապ փոփոխությունները առանց վարչական ռեսուրսի մեծ մասնաբաժնի օգտագործման, պահանջվող առավելագույն սեղմ ժամկետներում: Նման համակարգի ներդրումը հնարավոր է տեղեկատվական տեխնոլոգիաների նույնիսկ պարզ գործիքների կիրառման միջոցով: Համակարգը կհանդիսանա նաև հետադարձ կապի գործուն մեխանիզմ բարեփոխումների մշակման, իրականացման մարմինների և տեսչական մարմինների միջև:

9) **Տեսչություններում ստուգաթերթերի ներդրման բարելավում:** Ստուգում իրականացնող մարմինները, բացառությամբ ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների ճշտության և օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի, ստուգումներն իրականացնում են ՀՀ կառավարության կողմից հաստատված ստուգաթերթերի հիման վրա: Ստուգաթերթերի միջոցով տնտեսավարողների համար ստուգումները դարձել են հնարավորինս թափանցիկ և

կանխատեսելի: Ստուգաթերթերում ընդգրկված հարցերի պարզ ձևակերպումները յուրաքանչյուր տնտեսավարողի մինչև ստուգման սկիզբը թույլ է տալիս հստակ պատկերացնել թե իրենից ինչ է պահանջվում: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստուգաթերթը ամբողջությամբ նոր գործիք է և կիրառության մեջ ունի մի շարք այլ հնարավորություններ՝ ստուգում իրականացնող մարմինների կարգավիճակի փոփոխության ընթացքում կվերանայվեն ստուգաթերթերն ու դրանց կիրառման մեխանիզմները, դրանք գործունեության նոր պահանջներին ամբողջությամբ համապատասխանեցնելու նպատակով:

10) **Տեսուչ-տնտեսավարող սուբյեկտ արդյունավետ համագործակցության ձևավորում:** Կմշակվեն տեսուչ-տնտեսավարող սուբյեկտ արդյունավետ համագործակցության մեխանիզմներ՝ հիմնված համագործակցության, փոխադարձ հարգանքի, վստահության և փոխըմբռնման սկզբունքների վրա: Նոր տեսչական համակարգում տեսուչը դիտարկվում է ոչ թե որպես «վերահսկող», այլ «խորհրդատու», որի նպատակն է տնտեսվարող սուբյեկտին խրախուսել և օգնել իր գործունեությունը սահմանված պահանջներին համապատասխանեցնելու հարցում, հիմնականում խորհրդատվությամբ և կանխարգելիչ միջոցառումների առաջարկություններով, այլ ոչ միայն տուգանքներով: Նման համագործակցության ձևավորման համար կներդրվեն հետադարձ կապի ապահովման անխափան մեխանիզմներ, որոնք կնպաստեն ամբողջ տեսչական համակարգի թափանցիկության և հրապարակայնության մակարդակի բարձրացմանը: Կկիրառվեն միջազգային պրակտիկայում գործող համագործակցության ապահովման մոտեցումները, այդ թվում.

ա. տնտեսվարող սուբյեկտների իրազեկվածության մակարդակի բարձրացում,

բ. նոր տեսչական համակարգի վերաբերյալ տնտեսավարողների մոտ կիսամյակային անկախ հարցումների իրականացում,

գ. կլոր-սեղան քննարկումների կազմակերպում տեսուչների և տնտեսավարողների հետ՝ կայուն հետադարձ կապ հաստատելու և պահպանելու նպատակով,

դ. թափանցիկ և պարզ տեսչական գործընթացների ձևավորում (տնտեսավարող սուբյեկտները կարող են դիտել իրենց որոլտին առնչվող տեսչական աշխատանքների մասին տեղեկությունները՝ մուտքի հնարավորություն ունենալով կենտրոնական տեղեկատվական համակարգ),

ե. ստուգումների ընթացակարգերի, գործընթացների և արդյունքների հրապարակայնության ապահովում,

զ. տնտեսավարողների համար գործող ընթացակարգերի և օրենքների դասընթացների կազմակերպում,

թ. ակտիվ և պատրաստակամ գործարարների ներգրավում տեսչության առօրյա աշխատանքներում (նաև կառավարման խորհուրդների կազմում),

ժ. էթիկայի կանոնների մշակում և ներդրում:

Օպտիմալացման ծրագրի իրականացման առաջին փուլում Քարտուղարությունը կկազմակերպի քննարկումներ տեսչությունների և տնտեսավարող սուբյեկտների մասնակցությամբ: Քննարկումների արդյունքում ձևավորված դիրքորոշումները կներկայացվեն խորհրդին և հաշվի կառնվեն բարեփոխումների իրականացման ընթացքում:

11) **Մասնագետների որակավորման բարձրացում:** Նորաստեղծ մարմիններում կներգրավեն առավել բարձր մասնագիտական որակավորմամբ տեսուչներ և կապահովի նրանց համապատասխան վարձատրությունը: Կվերանայվեն տեսուչներին աշխատանքի ընդունելու կարգն ու պայմանները: Աշխատանքներ կտարվեն ձևավորելու տեսուչների նոր մտածելակերպ ու նոր մոտեցումներ՝ այդպիսով վերջ դնելով տարիներ շարունակ գործող միայն «վերահսկողական» գործելաոճին: Տեսուչի գործունեությունը կնպատակաուղվի օգնելու վերահսկվող սուբյեկտին՝ վերջինիս գործունեությունն անվտանգ իրականացնելու հարմար ուղղորդելու նրան դեպի համապատասխանեցում տանող ուղիները:

Բոլոր տեսուչները կանցնեն համապատասխան որակավորման ձեռք բերման/ բարձրացման դասընթացներ: Կմշակվեն վերապատրաստման դասընթացների համապատասխան մոդուլներ՝ հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձը: Որոշ մոդուլներ կմշակվեն նաև ղեկավարների և աջակցող աշխատակազմի համար:

12) **Կենտրոնական տեղեկատվական համակարգի ներդրում:** Տեսչական բարեփոխումների շրջանակում կմշակվի և կներդրվի ստուգում իրականացնող մարմիններում կենտրոնացված տեղեկատվական կառավարման համակարգ, որը կներառի տեսչական համակարգի բնականոն գործունեության համար անհրաժեշտ պաշտոնական աղբյուրներից ստացված հավաստի և մշտապես



թարմացվող տեղեկատվություն, ինչպես նաև այնպիսի տեղեկություններ, որոնք տեսչությունները պահանջում են միմյանցից իրենց սեփական տեսչական գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար: Տեղեկատվական համակարգը հնարավորություն կտա տեսչություններին իրականացնելու տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնության գնահատում:

Կենտրոնացված տեղեկատվական համակարգից բացի առաջարկվում է, որ յուրաքանչյուր տեսչություն մշակի, ներդնի և վարի նաև իր սեփական էլեկտրոնային տվյալների բազան, որտեղ կներառվեն բացառապես տվյալ տեսչության գործառնական գործառույթներին առնչվող տեղեկություններ՝ ինտեգրելով այն կենտրոնացված տեղեկատվական համակարգին, որպեսզի ապահովվի համատեղ օգտագործման համար նախատեսված տեղեկատվության պատշաճ փոխանակումը: Նոր կենտրոնացված տեղակատվական համակարգը կներառի այնպիսի մոդուլներ, ինչպիսիք են տեսչական աշխատանքների պահանջները, ստուգումների նախապատրաստումը, ստուգվող օբյեկտները (տեղեկատվություն տնտեսավարող սուբյետների մասին), ստուգումների պլանավորումը (ստուգումների պլանը և ժամանակացույցը), ստուգումների անցկացումը, տվյալների փոխանակումը, վիճակագրական հաշվետվությունները և այլն:

IX. Օպտիմալացման ծրագրի իրականացումը

41. Օպտիմալացման ծրագիրը վերաբերում է ստուգում իրականացնող բոլոր այն մարմիններին (տեսչություններին), որոնք գործում են նախարարությունների կառավարման ոլորտներում և աշխատակազմերում: Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա կմշակվի և կհաստատվի ըստ ոլորտների տեսչությունների միավորման սխեմա:

42. Օպտիմալացման ծրագրի իրականացման համար կմշակվի ծրագրի իրականացման գործողությունների ծրագիր՝ պատասխանատու կատարողներով և ժամանակացույցով: Կգնահատվեն իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները և դոնոր կազմակերպությունների հնարավոր աջակցության ներգրավումը: Քարտուղարությունը գործողությունների ծրագրի կատարման ընթացքի մասին յուրաքանչյուր ամիս կներկայացնի հաշվետվություն խորհրդին: Քարտուղարության կողմից կմշակվի և խորհրդի կողմից կհաստատվի օպտիմալացման ծրագրի իրականացման մոնիթորինգի և գնահատման պլան՝ չափորոշիչներով, որի հիման վրա քարտուղարությունը կիրականացնի մոնիթորինգ և տարեկան գնահատում: Մոնիթորինգի ընթացքում բացահայտված խնդիրները քարտուղարությունը պարբերաբար կներկայացնի Խորհրդի քննարկմանը՝ համապատասխան լուծումների միջոցով դրանք կանխարգելելու կամ ուղղելու նպատակով: Քարտուղարությունը մշակի տարեկան գնահատման արդյունքների հաշվետվություն, որը կներառի նաև քաղված դասերի վերլուծություն և առաջարկություններ բարեփոխումների և օպտիմալացման ծրագրի հաջորդ փուլի արդյունավետության բարձրացման համար:

43. Առաջին երկու փուլերում կիրականացվեն մեկական մարմինների ձևավորում, որոնց ընթացքում ձեռք բերված փորձի և քաղված դասերի հիման վրա հաջորդ փուլերում հնարավոր կլինի ապահովել մի քանի մարմինների միաժամանակ ձևավորումը:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
-----ի N -----Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԾՐԱԳԻՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ	ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆ (ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԺԱՄԿԵՏԸ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
1. Հիմնական օրենսդրական փաթեթների մշակում	1.1 Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ ազգային ժողով	**ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**	2015թ. 3-րդ եռամսյակ	Չի պահանջվում
	1.2. Ստուգումների մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ ազգային ժողով			
2. Պիլոտային տեսչական մարմնի ձևավորում	2.1. Կառավարման խորհրդի ձևավորում և տեսչության պետի նշանակում	**ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կառավարության 2009թ. Սեպտեմբերի**	2015թ. 3-րդ եռամսյակ	Չի պահանջվում

		17-ի N 1135-Ն որոշմամբ ստեղծված Տեսչական բարեփոխումների համակարգման խորհուրդ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
	2.2. Նոր մարմնի համար անհրաժեշտ ծախսերի նախահաշվի կազմում (այդ թվում պահպանման և ընթացիկ գործունեության ապահովման համար) և ամրակցվող գույքի կազմի որոշում			
3. Վերապատրաստման դասընթացների մշակում և կազմակերպում	3.1.Վերապատրաստման ծրագրերի և դասընթացների ժամանակացույցի մշակում (յուրաքանչյուր մարմնի համար ստեղծման պահից՝ 9 ամիս)	**ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ** (համաձայնությամբ)	2018թ. 2-րդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե, Միջազգային ֆինանսական կորպորացիա (տեխնիկական աջակցություն)
	3.2.Դասավանդողների			

	վերապատրաստում (training of trainers)			
	3.3. Ըստ տեսչությունների ուսուցման և վերապատրաստման աշխատանքների իրականացում (դասընթացների կազմակերպում)			
4. Միասնական տեղեկատվական համակարգի մշակում և ներդրում	4.1.Տեղեկատվական համակարգի ծրագրավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավում (բանակցություններ դոնորների հետ)	**ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն**	2017թ. 3-րդ եռամսյակ	
	4.2. Միասնական տեղեկատվական համակարգի համար անհրաժեշտ ընդհանուր բազայի ստեղծում			
	4.3. Ռիսկի գնահատման մեխանիզմների ծրագրային մշակում և ներդրում միասնական			

	տեղեկատվական համակարգ			
	4.4. Միասնական տեղեկատվական համակարգի փորձարկում, թերությունների շտկում և մեկնարկում			
5. Հանրային իրազեկման գործողությունների ծրագրի մշակում և ներդրում	5.1 Բարեփոխումների ընթացքի վերաբերյալ հասարակական լայն զանգվածներին տեղեկատվության տրամադրում	**ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**	2017թ. 3-րդ եռամսյակ	ՎԶԵԲ Գործարարության աջակցման գրասենյակ, Միջազգային ֆինանսական կորպորացիա (տեխնիկական աջակցություն)
6. Տեսչական մարմինների ձևավորման 2-րդ և 3-րդ փուլերի մշակում և իրականացում	6.1 Միաձուլվող տեսչությունների վերահսկման ոլորտների հստակեցում, քարտեզագրում		2017թ. 2-րդ եռամսյակ	Չի պահանջվում
	6.2. II փուլի իրականացում (մինչև երեք մարմինների ձևավորում)			

	6.3. III փուլի իրականացում (մնացյալ մարմինների ձևավորում)			
7. Տեսչական համակարգի օպտիմալացման ամփոփում		**ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**	2017թ. 4-րդ եռամսյակ	Չի պահանջվում